

ԴԵՄՔԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԻՍՊԱՆԵՒԱՅՈՒՄ



Բարսելոնայի Վալ դ'Էբրոն
հոսպիտալի աշխատակիցները
հաջողությամբ իրականացրել են
տղամարդու դեմքի
փոխպատվաստում, ով
որսորդական զենքի հանկարծակի

կրակոցից լուրջ վնասվածքներ էր ստացել: Հիվանդին
փոխպատվաստել են դոնորի փափուկ հյուսվածքները:

Բժիշկների խոսքերով՝ այս վիրահատական
միջամտությունը ներկայումս համարվում է աշխարհում
երբևէ տեղի ունեցած դեմքի ամենամաքողական
փոխպատվաստումը: 5 տարի առաջ ստացած
վնասվածքների պատճառով հիվանդը չէր կարողանում
խոսել և ինքնուրույն խմել կամ սննդել: Նա շնչում էր
արհեստական շնչափողի միջոցով:

Վիրահատությունը, որը սկսվել էր 2010 թվականի մարտի 20-ին, տևեց ավելի
քան 24 ժամ և անհրաժեշտ եղավ ավելի քան 30 մասնագետի մասնակցություն:
Ներկայումս հիվանդի դրությունը գնահատվում է որպես բավարար:
Այնուամենայնիվ, բժիշկները չեն կարող ասել, երբ և ինչ ծավալներով կարող են
վերականգնել մաշկի զգայունությունը և ֆունկցիաները:

"Մենք շնորհակալ ենք հիվանդին վստահության համար, քանզի այս
վիրահատությունը շատ վտանգավոր էր և կյանքի ու մահվան խնդիր",-
հայտարարեց հիվանդանոցի պլաստիկ վիրաբուժության ծառայության
ղեկավարը:

Աշխարհում դեմքի մաշկի մասնակի փոխպատվաստումը իրականացվել էր 2005
թվականին Ֆրանսիայում: Դրանից հետո Ֆրանսիայում, Չինաստանում և ԱՄՆ-
ում իրականացվել էր նմանատիպ ևս 10 վիրահատություն՝ բարդության տարբեր
աստիճաններով: Դրանցից ոչ բոլորն են ավարտվել բարեհաջող:

Մասնավորապես, չինացի հիվանդը, ում ոչ միայն դեմքի մաշկն էին
փոխպատվաստել, այլև դեմքի ոսկրային մի մասը, մահացել է
վիրահատությունից երկու տարի անց: Չինացի բժիշկների խոսքերով՝
տղամարդը անծամբ է հրաժարվել մասնագետների վերահսկողությունից և
անհրաժեշտ դեղամիջոցները ընդունելուց: Ֆրանսիացի վրաբույժներին ևս չի
հաջողվել պահպանել հիվանդի այն կյանքը, որին դեմքի հետ միաժամանակ
փոխպատվաստել էին նաև երկու ձեռքերը: